




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

79

Հեռագրի
անգիր

85
3-55

Քիթի
1891

0X7003

8-93
2-55

Հրատարակութիւն Սմբատ-բէկ Լալայեանցի

№ 3

ՀԵՏՍՏՈՒԹՅՈՒՆ ԱՂԶԻԿ

Մանկական վեպիկ

ԹԱՐԳ.

ՍԷՅԵԱՆ ԱՄԻՐԵԱՆ ՑԻ

«Էդ քեզ լաւ խրատ,

1211

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ «ԱՐՕՐ» Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ

Գոգովի, պր. և Ռադիստի, փող. ամկին

1891

Հրատարակութիւն Սմբատ-բէկ Հալալեանցի

8-93

№ 3

2-55 *ար*

15626

ՀԵՏԱՔՐՔԻՐ Ա.Դ.ԶԻԿ

Մանկական գեղիկ

ԹԱՐԳ.

ՍԵՅԵԱԴ ԱՄԻՐԵԱՆՅԻ

«Էդ քեզ լաւ խրատ,
Էլ չըցանես կուտհատ»:

ԹԻՖԼԻՍ

Տղարւն «Ա Ր Օ Ր» Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ

Գործին. տր. եւ թարգմանին. փող. տպիւն:

1891



ԵՐԿՈՒ ԽՕՍԷ

Հրատարակելով պ. Սէյեադ Ամիրեանցի եր-
րորդ թարգմանութիւնը, որը մի մանկական հե-
տաքրքիր, կրթող վէպիկ է, եւ նւիրելով դորան
հայ մանկական ընթերցարանին, հարկ ենք հա-
մարում յայտնել ընթերցող հասարակութեանը,
որ այսուհետեւ մենք պարբերաբար պիտի հրա-
տարակենք թէ պ. Ամիրեանցի, եւ թէ կողմնակի
պարոնների մի շարք պիտանի թարգմանութիւն-
ները:

Սմբատ-բէկ Լաւրճեանց

Дозв. Ценз. Тифлисъ, 19 июля 1891 года

Тип. Ароръ Т. Я. Назарьянъ уг. Гол. пр. и Бар. ул.



ԱՌԱՋԻՆ ՅԱՆՑԱՆՔ

Անան Տանգստուլթիւն
չէր տալիս ամբողջ ըն-
տանիքին: Նա որոնում էր
իւր եղբայր Հենրիկոսին,
և չէր կարողանում գտա-
նել: Վերջապէս նա գնաց իրանց այ-
գին, որտեղ բանում էր իւր մեծ քոյրը:
Անան կարծում էր, որ Հենրիկոսն այն-
տեղ խօսում է քրոջ հետ կամ կարդում
է: Սակայն նա այնտեղ էլ չէր: Անան
մտածում էր, թէ ո՞րտեղ պիտի լինի իւր
եղբայրը և ինչո՞ւ մինչև այժմ չէ վերա-
դառնում տուն:

—Ասան խնդրեմ, հարցրեց մեծ քոյր
Սօֆիան, ինչո՞ւ համար է քեզ այդքան
հարկաւոր Հենրիկոսը:

— Ես այս բոլորէս քեզ բոլորը կը պատմեմ, Սօֆիա ջան: Հենրիկոսն այս ժամիս խնդրեց ինձնից մատիտս մի քանի բոլորէի համար, որովհետեւ իրանը կորցրել էր, մինչդեռ նրան անհրաժեշտ էր ունենալ մատիտ, մի ինչ-որ շատ կարեւոր բանի համար: Իմ հարցմունքին նա ոչ մի խօսք չ'ասեց, միայն խոստացաւ շուտով մեզ էլ յայտնել իւր գաղտնիքը: Նա ասում էր, որ շտապում է շուտով վերջացնել իւր գործը և խնդրեց ինձ, որպէս զի ես էլ շուտով գնամ նրա մօտ: Ես կատարեցի նորա խնդիրը, սակայն չգտայ նորան ոչ հիւրասենեակում և ոչ էլ ուրիշ տեղ:

— Ես կարծում եմ, որ նա կորել չէ: Բայց կարելի է, Աննա, դու մոռացել ես հայրիկի առանձնասենեակը տեսնել:

— Ա՛խ, ճշմարիտ է, քոյր իմ, Հենրիկոսը շուտ շուտ գնում էր այնտեղ. շատ կարելի է հօրս առանձնասենեակում լինի: Ես կը գնամ այս բոլորէս:

Աննան վազեց: Հենրիկոսն արդարեւ

գտնվում էր իւր հօր սենեակում: Նա նկարում էր մի բանի թռչուններ իւր հօր գրքից, որին հայրը շատ զգուշութեամբ էր պահպանում: Սակայն հայրը լաւ ճանաչելով իւր որդու զգուշութիւնը և միևնոյն ժամանակ նկատելով, որ որդին ամենայն եռանդով պարապում է, թոյլ էր տուել նկարելու իւր գրքից, միայն այն պայմանով, որ Հենրիկոսը չհամարձակուի նորան առանձնա սենեակից դուրս բերելու: Աննան տեսնելուն պէս՝ յափշտակուեց իւր եղբօր նկարներով, որոնք շատ նմանում էին բնագրին:

— Ի՛նչ գեղեցիկ նկարում ես: Բայց ինչո՞ւ չէիր յայտնում մեզ քո պարապմունքների մասին, հարցրեց Աննան:

— Այդ մասին ես շատ իրաւացի պատճառներ ունեմ, Աննա, պատասխանեց Հենրիկոսը: Առաջինը՝ ես կամենում էի ձեր բացակայութեան ժամանակ ընծայել քեզ և Սօֆիային, քաշ անելով նրան ձեր հովանոցում: Երկրորդը՝ երկիւղ էի կրում թէ մի գուցէ ձեզանից մէկը

անգիտակցաբար ձեռք տայ նկարներին, որոնց իւրը դեռ չէ չորացել, և այդպիսով իմ բոլոր աշխատանքն ի զուր անցնի:

— Շատ կարելի է այդ ինձ ես ակնարկում, բայց հաւատացած եղիր, որ ես երբէք չեի համարձակուիլ այդ տեսակ բան անելու:

— Ես այդ լաւ գիտեմ, ասաց Հենրիկոսը, որ դու չար գիտաւորութեամբ չես անիլ, բայց որովհետեւ դու փոքր ինչ երկայնաձեռն ես, հետեւաբար և սիրում ես ձեռք տալ արդելուած բանին, այդ պատճառով կարող էիր:

Աննան թէպէտ աշխատում էր արդարացնել իրան, սակայն զգում էր, որ եղբօր կարծիքը բոլորովին ուղիղ է: Նա իւր ձեռքերը դրել էր մէջքին, որպէս զի սխալմամբ ձեռք չտայ եղբօր նկարին: Հենրիկոսը նկատելով քրոջ զգուշութիւնը, առաջարկեց հրաւիրել Սօֆիային, որ նա էլ նայի: Սօֆիան եկաւ, և շատ հաւանեց: Խոստացաւ միւս առաւօտ քաշ անել հովանոցից և փաղօրօք պատրաստ

տել գեղեցիկ մետաքսեայ ժապաւէններ: Երկու բոյրն էլ շատ ուրախ էին եղբօր ընծաներով, որոնք դեռ վերջացած չէին: Պատանի նկարիչը այնպէս շորհունակ աշխատել էր նկարի վրայ, որ կատարեալ զմայլեցնում էր տեսնողին:

Նա մինչև անգամ հրաժարուել էր իւր սովորական զբօսանքից, որ անում էր իւր քոյրերի հետ գրեթէ ամեն օր իրիկնապահներին:

Սօֆիայի և Աննայի համար նոյնպէս մխիթարական էր Հենրիկոսի զբօսները, սակայն իմանալով եղբօր հրաժարւելու պատճառը, նոքա ևս մխիթարում էին մէկ-մէկու:

Աննան առաւել անհամբեր սպասում էր այն ժամին, թէ երբ կըտեսնի իրանց հովանոցը զարդարուած եղբօր նկարներով:

Երբ նրանք վերադարձան տուն, գտան եղբօրը բոլորովին վերջացրած իւր պարապմունքը: Այդ միջոցին Հենրիկոսն ասեց. «Նկարները բոլորովին պատրաստ

են, բայց ներկերը չըչորանալու պատճառաւ մինչեւ վաղն առաւօտ չեմ կարող ցոյց տալ»:

Սօֆիան խոչեմ և համբերատար աղջիկ էր, բայց Աննան շատ ցանկանում էր, որ վերջին անգամ գոնեաւ աչքով տեսնի նկարներն ու յետոյ գնայ ննջարանը քնելու: Նա մի կերպ թագնովելով վերջապէս մտաւ հօր առանձնասենեակը: Մօտեցաւ սեղանին, որի վրայ շարած էին նկարները: Բայց որովհետեւ գիշերուայ մութը տիրել էր սենեակում, այդ պատճառով Աննան չկարողացաւ լաւ նայել, թէ արդեօք նկարներից որի ներկը դեռ չէր չորացած: Հազիւ նա իւր ձեռքը մօտեցրել էր նկարներին, իսկոյն նրանք շարժուեցան տեղից և վայր ընկան սեղանի վրայ: Յետոյ, որպէս զի միւս օրը բան չնկատեն, Աննան սկսեց կրկին տեղը դնել նկարները: Դեռ չվերջացրած իւր բանը, յանկարծ լսելի եղաւ միւս սենեակից Սօֆիայի ձայնը, որ Աննային կանչում էր քնելու:

Աննան շուարւած ձեռքը բարձրացրեց, որ փախչի, դժբախտաբար իսկոյն մի բան վայր ընկաւ սեղանի վրայ: Հենրիկոսի ներկերը գտնվում էին փոքրիկ պնակների մէջ, ուրեմն պարզ էր, որ այդ ներկերը չէին, թանաքամանն էլ փոքրիկ էր. բայց վայր ընկածը մեծ բան էր: Աննան յուսահատուած՝ բոլորովին իրան կորցնելով վագեց ննջարանը, կարծելով, որ ոչ մի փտանգ պատահած չի լինի նկարներին: Առաւօտեան երբ զարթնեց, իսկոյն մտաբերեց գիշերուայ տխուր դէպքը, բայց իմանալով, որ սուտ ասելը կամ թագնելը յանցանք է, ուստի և վճռեց յայտնել Սօֆիային: Վերջինս Աննային մի լաւ յանդիմանելուց յետոյ, մխիթարեց նորան, թէ յանցանք խոստովանուելն ոչ այլ ինչ է, եթէ ոչ բարեսրտութիւն: Մի քանի րոպէից յետոյ, երկու քոյր միասին գնացին հօր առանձնասենեակը, ուր պատահել էր գիշերուայ անախորժ դէպքը: Սակայն Աննան իրան մեղապարտ համարելով, չէր

Համարձակվում ներս մտնել սենեակը, այլ քաշքաշվելով, որպէս մեղաւոր, մեղմ քայլերով հետևում էր քրոջը:

— Ախ, որպիսի դժբախտութիւն, բացականչեց Սօֆիան, տեսնելով քրոջ արած անկարգութիւնը սեղանի վրայ: — Նայիր, թշուառական, տես ինչեր ես արել: Գիշերուայ կանթեղը վայր ես ձգել, միջի իւղը թափել, և փչացրել ես Հենրիկոսի բոլոր նկարները: Այժմն ուրանցից ոչ մէկը մի բանի հարկաւոր չէ: Աննան տխուր նայում էր, թէ ինչպէս Սօֆիան վերցնելով համրում էր, թէ քանիսն է արդեօք փչացած: Ամբողջ ութ հատ նկարներից հինգը շատ վատ կեղտոտուած էին, իսկ մնացեալ երեքը բոլորովին բանի պէտք չէին: Այդ միջոցին լսելի եղաւ Հենրիկոսի ոտնաձայնը, որ բարձրանում էր սանդուխքներից:

— Ախ, ես ինչ պիտի ասեմ, բացականչեց Աննան: Այ, նա գալիս է, կտեսնի, որ իւր աշխատանքը կորել է, այն ժամանակ ես արդէն մեռած եմ:

Հենրիկոսը ներս մտնելուն պէս, իսկոյն նկատեց, որ մի անախորժ դէպք պիտի անպատճառ պատահած լինի սենեակում: Աննայի կարմրած աչքերն ոչ պակաս հաստատում էին եղբօր ենթադրութիւնը:

— Ես կարծում եմ, որ իմ նկարները բոլորն էլ անփնաս են, — այս եղաւ Հենրիկոսի առաջին խօսքը:

Իւր հարցին պատասխան չստանալով, Հենրիկոսը երկիւղից տազնապի մէջ ընկաւ, հետևաբար և իմացաւ իւր աշխատանքի կորուստը: Սօֆիան մի քանի խօսքով բացատրեց պատահած դժբախտութեան պատճառը: Աննան այլ ևս չկարողանալով համբերել, սկսեց անձրևի պէս արտասուքներ թափել աչքերից: Պատանի նկարիչը նոյնպէս հազիւ հազ կարողացաւ պահել իւր արտասուքը:

— Քո նկատողութիւնը բոլորովին արդարացի էր, Հենրիկոս, ասեց Աննան. ես հէնց կամենում էի ձեռք տալ, իսկոյն նկարները շարժուեցան տեղից ու վայր ընկան:

—Ախր ինչո՞ւ էիր ձեռք տալիս, Աննա, երբ ես վաղօրօք խնդրել էի քեզնից, որ չանես այդ բանը մինչև առաւօտ: Բայց դու չկարողացար հանգիստ պահել բո առազաչարժ մատները: Բացի սորանից, տես ինչ խայտառակ կերպով կեղտոտել ես սեղանի սփռոցը:

—Ճշմարիտ է, տեսնում եմ և գիտեմ նոյնպէս, թէ հայրիկն ինչքան անբաւական պիտի լինի ինձնից: Բայց ես աւելի ցաւում եմ նկարների վրայ, որոնք պատրաստուած էին մեզ համար և որոնց համար ինչքան նեղութիւն ես քաշել: Ուտի աղաչում եմ, սիրելի եղբայր, ներիր իմ այդ յանցանքը, իսկ ես խոստանում եմ այսուհետեւ բոլորովին զգոյշ լինել:

—Սիրելի Աննա, ես քո եղբայրը լինելով, ներում եմ բոլոր յանցանքդ, բայց և այնպէս չեմ հաւատում խօսքիդ, մինչև որ գործքով չտեսնեմ ուղղուելը:

Աննայի ծնօղները նոյնպէս անբաւական էին, որ իրանց տան թանգազին

սփռոցը ապականուած էր նաւթի իւղով: Նորա ընդունում էին այդ անկարգութիւնը, որպէս հետեանք Աննայի ապագայ չարութեան: Նրանք անբաւական էին նոյնպէս և այն գեղեցիկ նրկարները փչացնելու համար, որոնց վրայ Հենրիկոսը բաւականի աշխատանք էր գործ դրել:



ՄԷԿ ՅԱՆՑԱՆՔԸ ԲԵՐՈՒՄ Է ԻՒՐ ՀԵՏ
ԵՐԿՐՈՐԴ



ի քանի ժամանակից
յետոյ, Սօֆիայի համար
կարեցին մի նոր շոր:
Սօֆիան պատրաստ-
վում էր ներկայ գըտ-
նուել իւր մօր բարեկա-
մուհու անուանակոչութեան
հանդիսին: Սօֆիայի մայրը շատ աշխա-
տում էր, որ նոր շորն ամենայն կերպ
կարգին նստի աղջկայ վրայ: Շորը դեռ
բոլորովին վերջացած չէր, երբ հարկա-
ւոր եղաւ մօրը մի քանի ժամով բացա-
կայել տնից: Սակայն շորն էլ հարկաւոր
էր շուտով վերջացնել և այդ պատճա-

1002
8617

ռաւ մայրը գնդասեղներով սարքեց շո-
րերի չկարուած տեղերը և յանձնեց Սօ-
ֆիային, որ մինչև իւր վերադարձը վեր-
ջացնի:

Արովհետև Սօֆիան շատ լաւ վարժ
էր ասղնագործութեան մէջ և շատ ըն-
դունակ կարելում, ուստի խոնարհելով
մօր հրամանին, ամենայն եռանդով նրա-
տեց իւր գործին: Այդ ժամանակ Ան-
նան յափշտակուած քրոջ կարի վրայ,
նայում էր ուշադրութեամբ նորա մօտ
նստած: Նոյն միջոցին Սօֆիային կան-
չեցին հօր առանձնասենեակը: Նա հան-
դարտութեամբ իւր կարը հաւաքելով,
դրեց սեղանի վրայ, և գնալով իւր հօր
մօտ, խնդրեց Աննային ձեռք չտալ կարին:

— Անհոգ կաց, Սօֆիա, ասաց Ան-
նան, ես միմիայն պիտի խաղամ իմ
տիկինի հետ և երբեք ինձ թոյլ չեմ
տալ ձեռք տալ բո կարին: Սօֆիան գը-
նաց: Աննան հանդարտութեամբ սկսեց
շորեր հագցնել իւր տիկինին, բայց երբ
հարկաւոր եղաւ տիկինի թիգանիկը,



պելու, նա դժուարացաւ: Իսկոյն միտը բերեց քրոջ շորը և կամեցաւ տեսնել, արդեօք ինչպէս են կապել Սօֆիայի նոր շորի թիզանիքը:

Նա ուզում էր առանց ձեռք տալու, միայն նայելով բաւականանալ, բայց տա-
րաբախտաբար իւր ցանկացած բանը շո-
րերի տակն էր: Աննան մտածեց, թէ
թիզանիքին նայելով՝ երբեք շորը չէ
կարող փչանալ, ուստի և իսկոյն շուռ
տուեց: Այդ միջոցին մի քանի գնդա-
սեղներ վայր ընկան յատակի վրայ: Նա
սովնայն հանդարտութեամբ կամենա-
լով վերստին սարքել գնդասեղները, յան-
կարձ նկատեց, որ անպիտան կատուն իւր
տիկինը տանում է: Նա մոռանալով իւր
ձեռքի գործը վայր գցեց ու վազեց կա-
տուի ետեւից, որպէս զի կարողանայ ա-
զատել նորանից իւր սիրելի տիկի-
նը: Վերադառնալով կատուի հետ ու-
նեցած արշաւանքից, Աննան նկատեց, որ
շորի բոլոր կտորները խառնւած են:
Այստեղ նա հազար անգամ անիծելով

իրան, վերստին սկսեց կարգի բերել կը-
տորները, բայց արդէն ուշ էր: Ընդհա-
կառակը, նա աւելի խառնեց կարը:

Այդ միջոցին ներս մտաւ տան ա-
ղախինը և տեսնելով Աննայի վարմուն-
քը, առաջարկեց շտապել կարելոյն չափ,
կարգի բերել կտորները: Աննան յանձն
առաւ ուրախութեամբ պատրաստել, մի-
այն թէ Սօֆիան չիմանար: Երբ Սօ-
ֆիան վերադարձաւ իւր կարին, գտաւ
նորան խճճուած: Նա բոլորովին չկարո-
ղացաւ հասկանալ, թէ ինչու համար է
շորը այդ գրութեան մէջ: Ինչքան աշ-
խատեց, որ մի կերպ կարգի բերի, բայց
չը յաջողուեց:

Վերջապէս շատ տանջուելուց յետոյ,
կարեց շորը ու յանձնեց աղախինին: Սօ-
ֆիան յայտնեց մօրը, թէ նա երկիւղ է
կրում, որ մի գուցէ շորը լաւ չնստի
իրա վրայ:

— Ինչո՞ւ ես վախենում, իմ նազելի
աղջիկ, ասաց մայրը, եթէ արդարեւ դու
ճշտութեամբ կատարել ես իմ պատուէրը:

— Առաջուց ես հէնց այդպէս էլ կարծում էի, մայր իմ, բայց երբ գնացի հայրիկի մօտ դասի, այնտեղից վերադառնալուց գտայ շորիս կտորները քանդուած և խառնուած:

— Ուրեմն Աննայի շար մասները դարձեալ շարժուել են քո կարի վրայ:

— Ես ոչինչ չեմ արել, մայրիկ, ասաց Աննան, և չէք էլ ցանկանալ մի բան անելու, միայն ուղիղն ասեմ ձեզ, իմ յանցանքն այն է, որ երբ ես կամենում էի տեսնել Սօֆիայի շորի թիզանիքը, յանկարծ մեր անպիտան կատուն կամեցաւ ձեռս կծել: Ես ուզեցի փախցնել կատուին, իսկոյն շորը ձեռքիցս վայր ընկաւ յատակի վրայ և մի բանի գնդասեղներ էլ հետը: Սակայն ինչքան կամեցայ էլի կարգը ձգել, չկարողացայ: Այդ միջոցին հասաւ մեր աղախինը, Սուսանը, և օգնեց ինձ: Նա շատ կարելի է, որ լաւ դարսած լինի կտորները:

— Երևում է, որ դու շատ չար աղջիկ ես, Աննա, ասաց մայրը, և խըց-

կվում ես այն բանի մէջ, որ քեզանից երբէք չի պահանջվում: Կարելի է մինչև անգամ գրազ գալ, որ նոր շորը այլ ևս քրոջդ վրայ լաւ չի նստիլ: Իսկ նորից կարել կամ կարգի գցել, այսուհետև անկարելի է, որովհետև ժամանակը շատ սուղ է:

Աննան վստահանալով, որ շատ լաւ կնստի քրոջ վրայ, ներողութիւն խնդրեց իւր չարութեան համար, աւելացնելով, որ առաջին և վերջին անգամը կլինի նորա այդ չարութիւնը: Մայրն երբէք չէր հաւատում նորա խօսքերին, համոզւած լինելով, որ Աննան չի հրաժարւիլ իւր բնութիւնից: Նա միշտ ասում էր. «Երեխին թողնել ձեռք տալ մի կիսատ գործի, կը նշանակէ փչացնել գործը»:

Աննան վերջապէս համոզւեց, որ նոր կարած շորը բոլորովին վատ է նստում քրոջ վրայ, և թէ Սօֆիային անհնարին է այդ հագուստով հիւր գնալ: Ուստի անբախտ Սօֆիան էլ պարտաւորւած պիտի լինի իւր հին շորը հագնել: Սօ-

Փիան երէք չէր բարկանում բրոջ վրայ
և չէր էլ կամենում զրկուել մօր բարե-
կամուհու անուանակոչութեան հանդի-
սից: Նա թէպէտ ունէր իւր հին շորե-
րից ամենամաքուրը, բայց վախենում էր
որ մի գուցէ մայրը արգելք լինի նորան
այդ շորով գնալու:

Աննան տեսնելով քրոջ անսահման
տխրութիւնը, չէր կարողանում պահել
իւր աչքերի արտասուքը և անիծելով
անիծում էր իւր բախտը:

— Ես համոզւած եմ, ասաց Հենրի-
կոսը, որ այդ պատահած դէպքերը
կուղղեն քեզ, Աննա, և դու այսուհետեւ
հեռու կրկենաս այդքան հետաքրքրու-
թիւնից, որը միշտ վնաս է պատճա-
ռում քեզ և ուրիշներին: Իսկ Սօփիան
էլ, իհարկէ, իւր կորստեան վրայ այն-
քան չի ափսոսի: Սօփիան էլ հետևելով
եղբօրը, մխիթարեց քրոջը և նրան համ-
բուրելով խոստացաւ մոռանալ ամենը,
նա մանաւանդ, որ նա շատ բաւական
էր իւր հին հագուստից:

ԱՆՆԱՅԻ ՄԻ ՆՈՐ ԶԱՐՈՒԹԻՒՆԸ



ննան չըմոռացաւ
այդ օրը և երկար
ժամանակ զսպում
էր իրան. նա աշ-
խատում էր այլ
ևս հետաքրքիր չը-
լինել և իւր տե-
սած բանին ձեռք
չտար:— Հենրիկոսն

ունէր մի քանի հատ սպիտակ ճագար-
ներ (գետնափոր նապաստակ), որոնց
շատ էր սիրում: Նա միմիայն ինքն էր
կերակրում և ջուր տալիս նոցա: Հենրի-
կոսի հետ շատ ժամանակ գնում էին

Ճագարներին այցելելու և քոյրերը: Ան-
նան միշտ իրանց բանջարանոցից բա-
ղում էր կաղամբի տերեւներ և հիւրա-
սիրում եղբօր ճագարներին: Հենրիկոսը
միշտ արգելում էր Աննային միայնակ
գնալ ճագարների մօտ, երկիւղ կրելով,
որ մի գուցէ մոռանայ ու բաց թողնի
նոցա բնակարանի փոքրիկ դռները: Նա
գլխաւորապէս վախում էր իրանց բակի
շնից, որ կարող է խեղդել անմեղ ճա-
գարներին: Աննան աղաչում էր եղբօրը,
որ նա թոյլ տայ իրան միայնակ այցե-
լելու ճագարներին, որովհետեւ սաստիկ
սիրում էր նոցա: Հենրիկոսն իսկապէս
հաւատում էր, որ նա արդարեւ շատ
սիրում է ճագարներին, բայց վախում
էր մի գուցէ դարձեալ հետաքրքրւի և
մի քիչ նայելուց յետոյ, կրկին մի դէպք
սլատահի:

Մի օր Հենրիկոսը Աննայի հետ գը-
նաց ճագարներին կերակրելու: Նոցա-
նից մէկը ոչինչ չէր ուտում: Կարծես
հիւանդ լինէր: Հենրիկոսը շատ տխրեց

և չգիտէր ինչով առողջացնէր իւր սի-
րելի կենդանուն:

— Մեր կառապան Յովհաննէսը, ա-
սաց Հենրիկոսը, միշտ ճագարներ է պա-
հում ծախելու համար, կը գնամ ու կը
հարցնեմ սորա հիւանդութեան պատ-
ճառը:

Աննան հաւանելով եղբօր խօսքերին,
խնդրեց առանց ժամաւաճառ լինելու
շտապել կառապանի մօտ: Նա կարծում
էր, որ հիւանդը մահամերձ է: Հենրի-
կոսն այն աստիճան վրդովուած էր, որ
մոռացաւ տալ բրոջը սովորական նա-
խազգուշութիւնը, և մի կերպ փակելով
փոքրիկ դռները, վազեց կառապան բը-
ժչկի մօտ: Աննան միայնակ մնալով,
կամեցաւ կրկին հիւրասիրել ճագարնե-
րին: Նա կաղամբի տերեւը վանդակի մի-
ջից անցկացնելով, ուտացնում էր նոցա:
Աննան կամեցաւ ձեռքով շփել ճագա-
րին, բայց վանդակի նեղութիւնը արգե-
լում էր ձեռքը ներս տանել ճագարի բնա-
կարանը: Ուստի և հարկաւոր էր ան-

պատճառ դռների մէկը բացել: Բայց որպէս զի Հենրիկոսը ոչինչ չնկատի, վճռեց միայն մի քիչ բանալ, կարծելով, որ սորանով ոչ մի վտանգ չի կարող պատահել:

Աննան հազիւ բացել էր դռան կէսը, երբ լսեց իւր մօտ կանգնած բակի շան ձայնը: Նա կամենալով փախցնել շանը, մոռացել էր բացած դուռը կրկին փակել: Մինչև որ նա շանը կը փախցնէր, յանկարծ ճագարներից երկուսը մէկ-մէկու ետեից դուրս վազեցին:

Շունը փոքրիկ կենդանիներին տեսնելուն պէս՝ բռնեց մէկին: Այնուհետև ազատել անբախտ զոհերին, արդէն ուշ էր և Աննան միւս ճագարին բռնելով, զցեց փոքրիկ բնակարանը և իսկոյն փակեց դուռը: Քրոջ աղաղակին եղբայրը վրայ հասաւ և տեսնելով, որ արդէն ուշ է ճագարին կենդանութիւն տալ, սաստիկ ծեծեց շանը, և վերցնելով անշընչացած զոհը, սկսեց աղի արտասուքներ թափել աչքերից:

Աննան լռելով աւելի տանջվում էր, քանց եղբայրը, բայց անուամենայնիւ չէր համարձակվում բարձրացնել իւր գլուխը, որովհետև լաւ գիտէր, որ պատահած դժբախտութեան պատճառը միայն ինքն է:



ԱՆՆԱՆ ԽԻՍՏ ՊԱՏԺՎՈՒՄ Է



Մտք էր վերջապէս կարծել, որ Աննայի համար վերջին դէպքն էր այդ: Բայց տարաբախտաբար ոչ: Ճագարի մահից յետոյ, մի բանի ամիս անցած, Աննան բոլորովին հանդարտուեց: Այնուհետեւ նա մեծ երկիւղածութեամբ էր նայում ամեն բանի. միշտ իրան զսպելով, թէ այլ ևս հետաքրքիր չի լինի: Սօփիային նուիրել էին մի շատ լաւ կապտազոյն թուլթակ, որ հիանալի կերպով խօսում և զուարճացնում էր ամենքին: Աննան շատ ուրախանում էր նրանով:

Նա միշտ կերակրում էր թուլթակին և ամբողջ ժամերով լսում նրա քաղցրահնչիւն ձայնը: Սակայն ի նկատի ու-

նենալով ճագարի մահը, այլ ևս չէր համարձակվում բանալ թուլթակի փոքրիկ սենեակի դուռը: Թուլթակը նոյնպէս սիրում էր Աննային: Վերջինը գեղեցիկ կերպով սովորացրել էր թռչունին երկայն փայտի վրայ պար գալու: Մի օր, երբ Աննան միայնակ էր տանը, կամեցաւ բաց թողնել թուլթակին գորգի վրայ պարելու: Մի փոքր մտածելուց յետոյ, բացեց փոքրիկ վանդակի դուռը և թուլթակին բաց թողեց տանը: Թռչունը իրան ազատուած տեսնելով, սկսեց այնքան շատ թռչկոտել տան գորգի վրայ, որ Աննան աշխատեց թռցնել ու զցել իւր փոքրիկ տունը:

Աննան շատ տանջուելուց յետոյ վերջապէս բռնեց թուլթակին, որ գցի վանդակի մէջ, իսկոյն չար թռչունը սարսափելի ամուր կծեց իւր բարերարի ձեռը, այնպէս որ յորդ արիւն սկսեց հոսել անբախտ Աննայի ձեռքից: Վերջը մեծ լինելու պատճառով, հարկաւոր եղաւ առ նուազն մի ամբողջ ամիս, որ

Աննայի վերքը բոլորովին առողջանար:
Այդ օրուանից Աննան սկսեց փոխել
իւր բնաւորութիւնը: Նա դարձաւ ամե-
նախոնարհ աղջիկ, լսեց ամենքին և չը հա-
մարձակուեց ձեռք տալ այն բանին, որ
իրան հարկաւոր չէր: Թէպէտ նրան շատ
թանգ նստեց իւր բնութեան փոփո-
խութիւնը, բայց այնուամենայնիւ նա
վերջապէս շատ խոհեմ և կատարեալ
աղջիկ դարձաւ: Այնպէս որ, երբ տես-
նում էր միւս երեխայոց արգելուած բա-
նին մի քիչ ձեռք տալիս, իսկոյն նկա-
տում էր, յայտնելով այն տխուր հետե-
ւանքները, որոնց ինքը դժբախտութիւն
էր ունեցել ենթարկուելու: Նա միշտ ու-
րախանում էր, որ ինքը այլ ևս անտե-
ղի հետաքրքիր և չար աղջիկ չէ:

Վ Ե Ր Ջ





Մեր հրատարակութեամբ արդէն լոյս են տեսել Սէյիտը Աֆրեանցի հետեւեալ թարգմանութիւնները.

1. Մի ԿԱԹՈՒՂ ԱՐԻԻՆ, գինն է 20 Կ.
2. ՀԱՄԼԷՏ, (լիբրետտո) — 20 —
3. ՀԵՏԱԶՐԸԻՐ ԱՂՋԻԿ, — 15 —

Վաճառ լում են բոլոր գրավաճառանոցներում, իսկ Բաղուում մեզ մօտ հետեւեալ հասցէով. Баку, Сумбатъ-беку Лалаеву.

Գինն է 15 Կ. □

29

0004073

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004073

